# ԳԵՏԱՓ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Արմեն Մարգարյան
Հեռախոս՝ +37494996653

Գետափ գյուղը գտնվում է Վայոց ձորի մարզի տարածքում: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1310մ բարձրության վրա, շրջապատված լեռներով, փռված է Երևան-Մեղրի մայրուղու ձախակողմյան մասում: Վարչական տարածքը կազմում է 1977հա : Մարզկենտրոնից հեռավորությունը 3կմ է, Երևանից 119կմ: Գյուղի միջով հոսում է Եղեգիս գետը:

Գյուղի կլիման ցամաքային է, ձմռանը չափավոր ցուրտ է, ոչ երկարատև, գարունը տաք է ներկարատև, ամռանը շոգ է, աշնանը՝ տաք:
Գերակշռում են հաստատուն պարզ եղանակները:

Գյուղը հիմնադրվել է 1828թ Պարսկաստանի Սալմաստ գավառի Խոյ գյուղից գաղթած հայերի կողմից:
Բնակիչները հիմնականում զբաղվում են բուսաբուծությամբ և այգեգործությամբ: Գյուղատնտեսության բնագավառում զբաղված է բնակչության 75%-ը:
Գյուղում արտադրվում է ցորեն, գարի, բանջարբոստանային մշակաբույսեր, խաղող: Բնակավայրի վարելահողերից ոռոգելի է 153հա:

Գյուղն ունի դպրոց, մշակույթի տուն, մանկապարտեզ, բուժկետ:
Գործում է Գետափի գինու գործարանը:

Գետափի հին եկեղեցին XX դարի սկզբին դեռևս կանգուն էր։
Այժմ նրա տեղում կառուցված է աղբյուր-հուշարձան։
Գյուղից 2 կմ հյուսիս-արևելքում կան <Գոմավանք> եկեղեցու ավերակներ՝ հին արձանագրություններով:

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Գետափ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 8 հուշարձան: